ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. հոկտեմբերի 21-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Նոր ընդունված հեռակա ասպիրանտների և հայցորդների թեմաների և ղեկավարների հաստատում
2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» դրամաշնորհի շրջանակում գիտական թեմաների կատարման առաջին տարվա հաշվետվությունների ընդունում
3. Մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և գիտական ղեկավարների հաստատում
4. Ընթացիկ հարցեր

1. Նոր ընդունված հեռակա ասպիրանտների և հայցորդների թեմաների և ղեկավարների հաստատում

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց նոր ընդունված հեռակա ուսուցմամբ երեք ասպիրանտներին և չորս հայցորդներին: Ընդգծեց, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների և Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնները նոր ընդունված հեռակա ասպիրանտներ և հայցորդներ չունեն, և օրակարգի առաջին հարցի քննարկումը՝ ըստ ամբիոնների, սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

1.1 ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ասպիրանտների և հայցորդների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին հարցը:

1.1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անահիտ Վահագնի Խեքոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա թվային փոխակերպման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանը: Հավելեց նաև, որ ասպիրանտ Անահիտ Վահագնի Խեքոյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անահիտ Վահագնի Խեքոյանի՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա թվային փոխակերպման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հայարփի Վաղթանգի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Կայուն զարգացման նպատակների և կանաչ տնտեսության փոխառնչությունները կառավարման համատեքստում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: Հավելեց նաև, որ

ասպիրանտ Հայարփի Ավետիսյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հայարփի Վաղթանգի Ավետիսյանի՝ «Կայուն զարգացման նպատակների և կանաչ տնտեսության փոխառնչությունները կառավարման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ելենա Արմենի Եղյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների արդյունավետության բարձրացումը լոգիստիկական ենթակառուցվածքի և կենտրոնների զարգացման միջոցով (ՀՀ օրինակով)», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Աբրահամյանը: Հավելեց նաև, որ ասպիրանտ Ելենա Եղյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը հարց հնչեցրեց՝ թեմայի վերաձևակերպման առնչությամբ: Մատնանշեց, որ ատենախոսության թեմայի վերնագիրը մոտ է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությանը:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը և տ.գ.դ., Գ.Վարդանյանը, հարցադրմանն անդրադառնալով, նշեցին, որ թեմայի վերնագրում շեշտը լոգիստիկական կենտրոնների և ենթակառուցվածքի զարգացման վրա է, և խնդիր չկա Ը.00.02 «Տնտեսության, նրա

ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությանը համապատասխանելու հարցում:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ելենա Արմենի Եղյանի՝ «Միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների արդյունավետության բարձրացումը լոգիստիկական ենթակառուցվածքի և կենտրոնների զարգացման միջոցով (ՀՀ օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Աբրահամյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.1.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Մարիամ Արտեմի Գյուրջյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «ՀՀ հարկային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը կայուն զարգացման համատեքստում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: Հավելեց նաև, որ հայցորդ Մարիամ Գյուրջյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

2. Տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը հարց հնչեցրեց՝ թեմայի վերաձևակերպման առնչությամբ: Մատնանշեց, որ ատենախոսության թեմայի վերնագիրը մոտ է Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությանը:

3. Ելույթ ունեցավ տ.գ.թ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը՝ անդրադառնալով թեմայի ձևակերպման և մասնագիտության դասիչի համապատասխանության խնդրին: Նշեց, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ատենախոսության և մասնագիտության դասիչի համապատասխանությունը որոշում են փորձագետները՝ ատենախոսության

բովանդակության և հրատարակված հոդվածների հիման վրա: Հավելեց, որ թեմայի վերնագրով մասնագիտության դասիչը որոշելու փորձերը ճիշտ չեն:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ պրոֆեսոր Ռ.Գևորգյանի բարձրաձայնած հարցը շատ արդիական է: Հավելեց, որ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից՝ ըստ մասնագիտությունների, հաստատված անձնագրերի բացակայության պարագայում, քննարկվող խնդրի լուծումն ընկնում է գիտական խորհուրդների և փորձագիտական եռյակների վրա: Հավելեց, որ դիտարկվող դեպքում, թեման կառավարում և ֆինանսներ մասնագիտությունների հատման տիրույթում է, հայցորդը և ղեկավարը պետք է ատենախոսության բովանդակությունը տանեն Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության ուղղությամբ:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Մարիամ Արտեմի Գյուրջյանի՝ «ՀՀ հարկային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը կայուն զարգացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.1.5 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Գոհար Ղևոնդի Մինասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Արհեստական բանականության գործիքակազմի ազդեցությունը գործարար գործընթացների արդյունավետության վրա (ՏՏ ոլորտի կազմակերպությունների օրինակով)», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: Հավելեց նաև, որ հայցորդ Գոհար Մինասյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ սույն ատենախոսության թեմայի ուղղությունը երաշխավորվել է մրցույթի շրջանակում՝ ըստ որի պետք է թեմաներ հաստատվեն հենց երաշխավորված ուղղություններով: Ամփոփելով քննարկումն առաջարկեց՝ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.5 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Գոհար Ղևոնդի Մինասյանի՝ «Արհեստական բանականության գործիքակազմի ազդեցությունը գործարար գործընթացների արդյունավետության վրա (ՏՏ ոլորտի կազմակերպությունների օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.1.6 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Տաթևիկ Զորիկի Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Տեխնոլոգիահենք տնտեսական զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանը: Հավելեց նաև, որ հայցորդ Տաթևիկ Սողոմոնյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1.6 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Տաթևիկ Զորիկի Սողոմոնյանի՝ «Տեխնոլոգիահենք տնտեսական զարգացման

հիմնախնդիրները և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի հարգելի բացակայությամբ պայմանավորված, ամբիոնի ընդունած որոշումը կներկայացնի գիտխորհրդի քարտուղար, դոցենտ Հ.Մարգարյանը:

2. Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդ Ռաֆիկ Գրիշայի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց գիտխորհրդի քարտուղար, դոցենտ Հ.Մարգարյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Հարկային հաշվառման արդի հիմնախնդիրները ՀՀ բուհերում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Մնացականյանը: Հավելեց նաև, որ հայցորդ Ռաֆիկ Գրիգորյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց գիտխորհրդի քարտուղար, դոցենտ Հ.Մարգարյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 20.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նոր ընդունված հայցորդ Ռաֆիկ Գրիշայի Գրիգորյանի՝ «Հարկային հաշվառման արդի հիմնախնդիրները ՀՀ բուհերում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Մնացականյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» դրամաշնորհի շրջանակում գիտական թեմաների կատարման առաջին տարվա հաշվետվությունների ընդունում

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ նախորդ տարի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթին հայտեր են ներկայացրել և շահել Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտներ՝ Սիլվիա Սարգսյանը և Ալիսա Գևորգյանը: Ներկայացրեց դրամաշնորհի շրջանակում կատարվող գիտական թեմաները և օրակարգի երկրորդ հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտ Սիլվիա Սարգսյանին:

2.1 ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» դրամաշնորհի շրջանակներում 24AA-5B044 ծածկագրով «Մարդկային կապիտալի զարգացման հեռանկարները ՀՀ-ում աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» գիտական թեմայի (կատարող՝ Սիլվիա Սարգսի Սարգսյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտ) կատարման 2024-2025թթ. հաշվետվության մասին հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի կատարող առկա ասպիրանտ Ս.Սարգսյանը հակիրճ ներկայացրեց գիտական նախագծի ռազմավարական նշանակությունը և հիմնական նպատակը մարդկային կապիտալի զարգացման հեռանկարների ուսումնասիրության համատեքստում՝ ՀՀ-ում աշխատաշուկայի վերափոխման պայմաններում: Հաշվետու տարում կատարված աշխատանքի արդյունքներն ամփոփ ներկայացրեց ըստ ուսումնասիրության հետևյալ շրջանակների՝ 1) մարդկային կապիտալի զարգացման վերաբերյալ գրականության ուսումնասիրություն, 2) ՀՀ մարդկային կապիտալի զարգացման վրա ազդեցություն ունեցած գործոնների բացահայտում և դրանց փոփոխությունների ուսումնասիրություն, 3) նշանակալի գործոնների և ՀՀ սոցիալ տնտեսական ցուցանիշների միջև կախվածությունների բացահայտում, 4) քննարկումների կազմակերպում:

Նշեց, որ 1 գիտական հոդված է պատրաստել տպագրության, որը վերաբերում է մարդկային կապիտալի կառավարման և տնտեսական աճի կապի վերլուծությանը՝

հիմնված վերոնշյալ 3-րդ կետում կատարված վերլուծության վրա: Հոդվածը նախատեսվում է ուղարկել հրատարակման ՄԳՇ-ներում ընդգրկված գիտական ամսագրերում: Հավելեց, որ հաշվետու տարում մասնակցել է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Optimizing growth and resilience through gender responsive economic policies» թեմայով աշխատաժողովին (Ղազախստանի խոշորագույն քաղաք Ալմաթիում), որտեղ ներկայացրել է զբաղվածության ոլորտում ՀՀ-ի կողմից մշակված հիմնական ռազմավարական առաջնահերթությունների և տնտեսական աճի կանխատեսումների կապը:

Ամփոփելով հաշվետվության ներկայացումը՝ ընդգծեց, որ հաշվետու տարում կատարված աշխատանքները ապահովել են այն տեսական և գործնական հիմքերը, որոնք անհրաժեշտ են հետագա առավել խորքային վերլուծությունների համար, իսկ որպես արձանագրված հիմնական խնդիր՝ մատնանշեց որոշ վիճակագրական տվյալների սահմանափակ հասանելիությունը կամ թերի առկայությունը:

Հարցեր չինչեցին: Ելույթներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ «Մարդկային կապիտալի զարգացման հեռանկարները ՀՀ-ում աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» գիտական թեմայի (կատարող՝ Սիլվիա Սարգսի Սարգսյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտ) կատարման 2024-2025թթ. հաշվետվությանը և գնահատել դրական՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով (հաշվետվությունը կցվում է):

2.2 ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» դրամաշնորհի շրջանակներում 24AA-5B049 ծածկագրով «Տնտեսական հարաբերությունների թվայնացման խնդիրները ՀՀ-ում» գիտական թեմայի (կատարող՝ Ալիսա Արենի Գևորգյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտ) կատարման 2024-2025թթ. հաշվետվության մասին հարցը:

2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի կատարող առկա ասպիրանտ Ա.Գևորգյանը ևս հակիրճ ներկայացրեց գիտական նախագծի ռազմավարական նշանակությունը և հիմնական նպատակը ՀՀ տնտեսական հարաբերությունների թվայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման և զարգացման համատեքստում՝ հիմնված ազգային և

միջազգային փորձի համադրության վրա: Հաշվետու տարում կատարված աշխատանքի արդյունքներն ամփոփ ներկայացրեց ըստ ուսումնասիրության հետևյալ շրջանակների՝ 1) թվային տնտեսության, էլեկտրոնային կառավարման և բիզնեսի թվայնացման վերաբերյալ տեղական և միջազգային գիտական աղբյուրների ուսումնասիրություն, 2) ՀՀ տնտեսության թվայնացման ընթացիկ վիճակի նախնական վերլուծություն՝ SWOT և PESTEL վերլուծական գործիքների կիրառմամբ:

Նշեց, որ հաշվետու տարվա հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա զեկուցումով հանդես է եկել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում կազմակերպված «Փոխակերպվող տնտեսություն» միջազգային գիտաժողովում՝ «The Impact of Digitalization on Economic Growth: Evidence from an Upper-Middle-Income Country» թեմայով, որտեղ քննարկվել է թվայնացման ազդեցությունը տնտեսական աճի վրա և ներկայացվել է Հայաստանի օրինակով իրականացված վերլուծություն: Հավելեց, որ 1 գիտական հոդված պատրաստ է տպագրության, որը վերաբերում է թվայնացման և տնտեսական աճի կապի վերլուծությանը՝ հիմնված վերոնշյալ 1-ին և 2-րդ կետերում կատարված վերլուծության վրա: Հոդվածը նախատեսվում է ուղարկել հրատարակման ՄԳՇ-ներում ընդգրկված գիտական ամսագրերում: Ավարտական փուլում է ևս մեկ գիտական հոդված, որտեղ ներկայացված են Generalized Q Analysis (GQA)-ի արդյունքները:

Ամփոփելով հաշվետվության ներկայացումը, մատնանշեց արձանագրված խնդիրները՝ վիճակագրական տվյալների հասանելիության սահմանափակումներ, թվայնացման գործընթացների միասնական ցուցանիշների բացակայություն և մասնավոր հատվածի հետ համագործակցության ցածր մակարդակ, և ընդգծեց, որ հաշվետու տարում կատարված աշխատանքները ձևավորել են այն տեսական և մեթոդաբանական հիմքերը, որոնք անհրաժեշտ են ՀՀ տնտեսության թվայնացման գործընթացների ավելի խորքային և կիրառական վերլուծության համար, թվարկեց հաշվետու երկրորդ տարվա անելիքները:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ «Տնտեսական հարաբերությունների թվայնացման խնդիրները ՀՀ-ում» գիտական թեմայի (կատարող՝ Ալիսա Արենի Գևորգյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտ) կատարման 2024-2025թթ. հաշվետվությանը և գնահատել դրական՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետում գործող առկա ուսուցման 5 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ-ում գործող կարգի համաձայն մագիստրոսական թեզերի թեմաները և գիտական ղեկավարները հաստատվում են ֆակուլտետի գիտխորհրդում: Հավելեց, որ այս ուղղությամբ ֆակուլտետի մեթոդխորհուրդը մեծ ծավալի աշխատանք է կատարել և՛ նախորդ, և՛ այս տարի՝ ամբիոնների կողմից ներկայացված թեզերի վերնագրերի ձևակերպումները վերանայելու ուղղությամբ, և օրակարգի երրորդ հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանին:

2. Մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը՝ նշելով, որ 2025-2026 ուստարում ֆակուլտետի ամբիոններն իրականացնում են առկա ուսուցման 5 մագիստրոսական կրթական ծրագրեր: Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում գործում է առկա ուսուցման «Միջազգային տնտեսական հարաբերություններ» (5 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագիրը, Կառավարման և գործարարության ամբիոնում՝ առկա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» (15 ուսանող) և «Գործարար վարչարարություն (կառավարում)» (19 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերը, Ֆինանսահաշվային ամբիոնում՝ առկա ուսուցման «Ֆինանսներ» (13 ուսանող) և Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում՝ առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» (24 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերը: Հավելեց, որ նախորդ տարվա աշխատանքային փորձը հիմք ընդունելով՝ այս տարի էլ.փոստերի միջոցով թեմաների ձևակերպումները ամբիոնների վարիչներն ուղարկել են ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Վ.Ալեքսանյանին, փոխդեկանը՝ մեթոդխորհրդին: Մեթոդխորհրդի դիտողությունները փոխդեկանը փոխանցել է ամբիոնների վարիչներին: Հավելեց, որ, ըստ էության, շատ արդյունավետ աշխատանք է կատարվել՝ քննարկումների ժամանակ ծավալվող գաղափարների գեներացման և գիտելիքի փոխանակման գործընթացի շնորհիվ:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց մեթոդխորհրդի անդամներին կատարված աշխատանքի համար: Նշեց, որ մագիստրոսական թեզերի վերնագրերից զատ մեթոդխորհուրդը նաև վերանայել և

հստակեցրել է ավարտական աշխատանքների թեմաների վերնագրերը: Հավելեց, որ կատարված արդյունավետ աշխատանքի շնորհիվ՝ հատկապես եզրույթների կիրառության մասով, ապահովվել է և՛ մագիստրոսական թեզերի, և՛ ավարտական աշխատանքների վերնագրերի ձևակերպման հստակությունը:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քննարկումն ամփոփելով, առաջարկեց մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 5) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

2) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 19) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

3) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 15) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

4) Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Ֆինանսներ» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 13) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

5) Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 24) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

Ֆակուլտետում գործող առկա ուսուցման 5 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը և ղեկավարները հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:

4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, որակի ապահովման հանձնաժողովի նախագահ տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը նշեց, որ 2024-25 ուստարում իրականացվել է ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում), «Շուկայագիտություն (մարքեթինգ), «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրերի մշտադիտարկում: Այդ նպատակով դեկանի հանձնարարականով ձևավորված կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքային խմբերը՝ կրթական ծրագրերի ղեկավարների գլխավորությամբ, ուսումնասիրել են համապատասխան կրթական ծրագրերի ուսումնական պլանները և դրանց քարտեզը, դասընթացների նկարագրիչները, ինչպես նաև ֆոկուս խմբերի մեթոդով անցկացված հետազոտության արդյունքները: Կատարված վերլուծությունների և ստացված արդյունքների վերաբերյալ դրույթները մշտադիտարկման խմբերի ներկայացրած հաշվետվություններում արտացոլված են ներքոնշյալ 9 կետերով՝

1) կրթական ծրագրի քանակական բնութագրերը,
2) ուսանողական հարցումների արդյունքները,
3) շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները,
4) կրթական ծրագրի մյուս շահառուների արձագանքը,
5) համագործակցային կապերն ու պրակտիկան,
6) կրթական ծրագրի փոփոխությունները,
7) կրթական ծրագրի արտաքին գնահատման տվյալների հիման վրա ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը,
8) կրթական ծրագրի ուժեղ ու թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը,
9) կրթական ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը:

Ընդգծեց, որ ներկայացված հաշվետվությունների համակողմանի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ տվյալ ժամանակահատվածում 3,75 միավորից անընդմեջ ցածր գնահատված դասընթացներ չկան, ինչը վկայում է դասընթացների որակի կայունության և իրականացված բարելավումների արդյունավետության մասին: Նշեց, որ հաշվետվությունների շրջանակում իրականացվել է SWOT վերլուծություն, որտեղ առանձնացվել են գործող կրթական ծրագրերի ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև զարգացման հնարավորություններն ու առկա վտանգները: Հավելեց, որ հաշվետվություններում կատարված առաջարկությունների հիմնական մասի իրագործումը նախատեսվում է 2025-26 ուստարվանից սկսած: Մատնանշեց, որ ֆակուլտետում գործող մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլանների շարունակական բարելավման աշխատանքները կատարվում են հաշվի առնելով ինչպես ՀՀ աշխատաշուկայի պահանջները, այնպես էլ աշխարհի լավագույն բուհերի առաջավոր փորձը՝ նպատակ ունենալով մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլանները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին:

Տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը, զեկույցն ամփոփելով, նշեց, որ ՏԿՖ որակի ապահովման հանձնաժողովի 20.10.25թ. թիվ 1 նիստի որոշմամբ մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում), «Շուկայագիտություն (մարքեթինգ), «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները գնահատվել են դրական և հաստատվել: Հավելեց, որ միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին՝ հաստատելու ՏԿՖ որակի ապահովման հանձնաժողովի սույն որոշումը:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց աշխատանքային խմբերի և հանձնաժողովների անդամներին արդյունավետ աշխատանքի համար՝ ընդգծելով կատարված աշխատանքի կարևորությունը: Մատնանշեց, այն փաստը, որ ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում), «Շուկայագիտություն (մարքեթինգ), «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրերը՝ բակալավրի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» կրթական ծրագրերի հետ, հիմա միջազգային հավատարմագրման փուլ են անցնում: Հարցի քննարկումն ամփոփելով առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել մագիստրատուրայի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները:

4.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի 20.10.25թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)»,

«Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները, ընդունել հաշվետվություններում կատարված առաջարկությունները և հանձնարարել ծրագրերի ղեկավարներին և դեկանի տեղակալ Վ.Ալեքսանյանին՝ դրանք պարտադիր հաշվի առնել մագիստրատուրայի ծրագրերի փաստաթղթերի ընթացիկ և հետագա տարիների փաթեթներում:

ՏԿՖ մագիստրատուրայի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունների հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4.2 ԼՍԵՑԻՆ. Ուսանողական հարցմանը ֆակուլտետի ուսանողների անբավարար մասնակցության հարցը:

4.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Ա.Խառատյանը նշեց, որ խիստ մտահոգիչ է ուսանողական հարցմանը ուսանողների ցածր մասնակցությունը՝ հատկապես հարցման էլեկտրոնային տարբերակով կազմակերպմամբ պայմանավորված: Հավելեց, որ ուսանողների անբավարար մասնակցության պատճառով հարցման արդյունքները շեղվում են օբյեկտիվ իրականությունից՝ որպես գնահատման գործիք դրանց կիրառման արդյունավետությունը նվազեցնելով: Դոցենտ, տ.գ.թ. Ա.Խառատյանը հարցադրմամբ դիմեց գիտխորհրդի անդամ ուսանողներին՝ ինչպիսի՞ միջոցներով հնարավոր կլինի ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը հարցմանը:

2. «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Բ.Բալայանը, «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Վ.Մաթևոսյանը առաջարկեցին կամավոր պարտադիր սկզբունքի կիրառմամբ լուծում՝ դասից 20-25 րոպե հատկացնել հարցմանը մասնակցելուն:

3. Ելույթ ունեցան տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Խաչատրյանը: Նշեցին, որ անհրաժեշտ է բացահայտել այն խնդիրները, որոնք պայմանավորում են ուսանողների պասիվ և անտարբեր վերաբերմունքը հարցմանը, իրազեկել նրանց վերջինիս կարևորության մասին՝ հատկապես մատուցվող կրթական ծառայության լավարկման և բարելավման համատեքստում:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ այս հարցը իրոք մտահոգիչ է և ԵՊՀ գիտական խորհրդում ևս պարբերաբար քննարկվում է՝ հարցմանը ուսանողների ակտիվ և օբյեկտիվ մասնակցությունը խթանելու համար միջոցներ ձեռնարկելու նպատակով: Հավելեց, որ չնայած այն փաստին, որ փոխդեկանների հետ պարբերաբար

լսարաններում հարցմանը ակտիվ և օբյեկտիվ մասնակցության, որպես վրեժխնդրության գործիք այն չկիրառելու կոչ են արել՝ վերջին 3 կիսամյակներում հարցմանը մասնակցության ցուցանիշը խմբերում չի գերազանցել 25%-ը: Մատնանշեց, որ ուսանողական հարցումն ըստ կարգի անանուն է և պարտադրման սկզբունքը չի կարող գործել: Ընդգծեց, որ հոկտեմբերի սկզբին Ծաղկաձորում ԵՊՀ ուսանողական ակտիվը մեկօրյա աշխատաժողով էր կազմակերպել, որտեղ, ի թիվս այլ խնդիրների, ուսանողների հետ քննարկվել է նաև այս հարցը:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, գիտխորհրդի անդամ ուսանողներին հորդորեց՝ աշխատել տարբեր ֆորմատներով, որպեսզի այս գաղափարը հասնի իր լուծմանը, իսկ գործընկերներին էլ հանձնարարեց՝ առաջարկներ ներկայացնել խնդրին արդյունավետ և գործուն լուծում տալու ուղղությամբ:

4.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի հանձնարարականը քննարկվող հարցի կապակցությամբ ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԳՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԳՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ